ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 135-րդ հոդվածի 1-ին մասում «գրանցման» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների, ինչպես նաև գույքային իրավունքների իրականացման նկատմամբ սահմանափակումներ կիրառելու, փոփոխելու կամ դադարեցնելու իրավասություն ունեցող պետական մարմինների և դատարանների կողմից կիրառված սահմանափակումների» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 437-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«7. Այն դեպքերում, երբ պայմանագրի առարկան անշարժ գույքն է կամ դրա նկատմամբ գույքային իրավունքը, կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ պայմանագրում նախատեսել այդ իրավունքի իրականացման սահմանափակում նախատեսող՝ օրենքին չհակասող պայման: Այդ պայմանով նախատեսված սահմանափակումը ենթակա է պետական գրանցման, իսկ պայմանագիրը պետք է պարունակի առանձին դրույթ՝ սահմանափակման բնույթի և դրա պետական գրանցման հիմք հանդիսանալու վերաբերյալ:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2026թ., Երևան

ՀՕ - ... - Ն